## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

28.02.2022թ.

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

### ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍՏ N 2)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և համայնքի ղեկավարի առաջարկությունը Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի 1-ին փողոցի 13 հասցեում, համայնքային սեփականություն հանդիսացող, 09-039-0025-0013 կադաստրային ծածկագրով 0,039հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N2393713) և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղի 4-րդփողոցի 2 հասցեում 09-037-0060-0016 կադաստրայինծածկագրով 0,0894 հաբնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N2393723) նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՓԲԸ-<<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> որպես Լեհվազ և Լիճք ամբուլատորիաների սպասարկման համար նախատեսված հողամասեր :

2.Համայնքի ղեկավարին՝ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Համայնքի Ղեկավար՝ ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

**Իսկականի հետ ճիշտ է՝**

**Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**